«Շիրակի ուսուցիչների միություն» գիտակրթական կենտրոն ՀԿ
վերապատրաստող կազմակերպություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ «ԿԱՊԿ ունեցող սովորողների դիտում և գնահատում»

Կատարող՝ Ալվարդ Հենրիկի Խաչատրյան

/անուն,ազգանուն հայրանուն/

Գյումրու N38 հ/դ, հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի

/դպրոց մասնագիտություն, ըստ վերապատրաստման խմբի/

Ղեկավար՝ Կարինե Ալեքսանյան

/անուն,ազգանուն /

ԳՅՈՒՄՐԻ 2023թ.

Բովանդակություն

Ներածություն……3

Գլուխ1. Դիտում……5

1.1 Դիտման կարգը և պայմանները ……5

1.2 Դիտման տեսակները……8

Գլուխ 2. Գնահատում

2.1 Գնահատումը, դրա հիմնական սկզբունքների և գործառույթների սահմանումը11

2.2 ԿԱՊԿ ունեցող աշակերտների գնահատում.....…….....14

2.3 Գնահատման ընդհանուր չափանիշները……15

Եզրակացություն……16

Օգտագործված գրականություն……17

Ներածություն

Դիտում՝ նկարագրական հոգեբանական մեթոդ, որի առանձնահատկությունն ուսումնասիրվող օբյեկտի կազմակերպված կամ պլանավորված ընկալումն է, նրա վարքային դրսևորումների գրանցումը: Դիտումը հոգեբանական երևույթների նպատակուղղված, կազմակերպված ընկալումն է որոշակի պայմաններում դրանք ուսումնասիրելու նպատակով:

Դիտման մեթոդը հետազոտության հնագույն մեթոդն է: Դրա օգնությամբ կարելի է մարդու մասին լայն տեղեկություններ ստանալ: Այն անփոխարինելի է այնտեղ, որտեղ մշակված չեն ստանդարտացված ընթացակարգեր: Դիտման մեթոդը չափազանց մեծ նշանակություն ունի երեխաների հոգեբանական առանձնահատկություններն ուսումնասիրելու համար, քանի որ նրանք մեծ խնդիրներ են առանձնացնում փորձարարական հետազոտության ընթացքում:

Դիտման՝ որպես ընդհանուր հոգեբանական մեթոդի նշանակությունը նրանում է, որ, ի տարբերություն այս կատեգորիայի այլ մեթոդների (զրույց, հարցազրույց, հարցաթերթ, թեստ), այս մեթոդը հնարավոր է ոչ միայն յուրաքանչյուր հետազոտության մեջ, նույնիսկ անխուսափելի է: Եթե նույնիսկ օբյեկտի ուսումնասիրման համար օգտագործվում է այլ փորձարարական մեթոդ, դիտումը պարտադիր ուղեկցում է վերջինիս: Ցանկացած ուսումնասիրման ժամանակ հետազոտողը դիտում է, հետևում է փորձարկվողի ռեակցիաներին և վարքի դրսևորումներին, ինչպես նաև հետևում է փորձի անցկացման պայմաններին: Թերևս միայն փաստաթղթերի ուսումնասիրությունն է անցկացվում առանց հետազոտվող օբյեկտի անմիջական դիտման: Սակայն, այստեղ էլ հետազոտողը անուղղակիորեն օգտագործում է դիտման արդյունքներ: Այս առումով, կարելի է ասել, որ դիտումն ընկած է ցանկացած հետազոտության հիմքում:

Գլուխ 1. Դիտում

1.1 Դիտման կարգը և պայմանները

Դիտման արդյունքների գրանցման համար օգտագործվում են հատուկ բլանկներ, որոնցում նշվում են ուսումնասիրման խնդիրները, նաև սուբյեկտի՝ ուսումնասիրման ենթակա պարամետրերը: Սովորաբար դրանք նշվում են սեղմ. հոգեբանի խնդիրն է բլանկի մեջ ներառել պայմանական նշաններ այս կամ այն բնութագրի վերաբերյալ:

Կարելի է օրինակ բերել «Զրույցի գրանցման բլանկը», որը կազմվել է 1974 թվականին Գուսնիկովի և Գյուրիչովի կողմից: Վերջինս օգտագործվում է դիտման և զրույցի համար: Առավել հետաքրքրական է բլանկի առաջին մասը, որը վերաբերում է դիտման գործընթացին: Վերջինիս համաձայն՝ դիտման գործընթացում անհրաժեշտ է գրանցել.

- Դիտվողի քայլվածքը, միմիկան, պանտոմիմիկան, մարմնաշարժումները, մաշկը, հագուստի առանձնահատկությունները,
- Խոսքի բնութագրերը. ձայնը, տեմպը, արտասանությունը, բառապաշարը, այսինքն՝ լինգվիստիկական և պարալինգվիստիկական առանձնահատկությունները,
- Ընդհանուր շարժողականությունը. արագություն, հստակություն, ծանրաբեռնվածություն,
- Սոցիալական վարք. շփման հաստատում, դիտման ընթացքում վարքի փոփոխություն, հասարակական ունակություններ, սոցիալական վարքի որակական ցուցանիշներ՝ դոմինանտություն, ագրեսիա, աֆիլյացիա,
- Տրամադրություն. փոփոխականություն, էյֆորիա, լրջություն և այլն,
- Խնդիրներ լուծելիս դրսևորվող վարք. աշխատանքնային ունակություններ, ուշադրություն,
- Նյարդային լարվածության ցուցանիշներ. ձեռքի շարժումներ, դող, դիմագծերի ծամածռություն:

Դիտումը պահանջում է նաև որոշակի պայմաններ. այսինքն՝ իրավիճակ, որում կատարվում է դիտվող դեպքը և զարգանում դիտվողի հոգեկան գործունեությունը:

Դիտման պայմանները կարող են դասակարգվել հետևյալ տեսակների մեջ.

- Իրական կամ արհեստական
- Դիտողի կողմից կառավարվող կամ չկառավարվող

- Ինքնաբերական կամ կազմակերպված
- Ստանդարտ կամ յուրահատուկ
- Սովորական կամ էքստրեմալ
- Խաղային, ուսուցողական, աշխատանքային և այլն։

Ընդ որում, շփման տեսանկյունից տարբերում են հետևյալ իրավիճակները.

- Անմիջական և ոչ անմիջական
- Վերբալ և ոչ վերբալ
- Կարճաժամկետ և երկարաժամկետ։

Դիտման մեթոդի թերի կողմերին կարելի է վերագրել հետազոտողի պասիվ դերը, ով սպասում է իրեն հետաքրքրող դեպքին, թեև վերջինիս դրսևորման աստիճանը ոչ միշտ է բարձր, արդյունքների ընդհանրացման դժվարությունը, դիտվող երևույթների ծագման հստակ պատճառների որոշման դժվարությունը և այլն։

1.2 Դիտման տեսակները

- Օբյեկտիվ (արտաքին) դիտում-ինքնադիտում (ներքին դիտում)

Օբյեկտիվ դիտումը դիտում է դրսից. դիտողից դուրս գտնվող արտաքին օբյեկտների դիտում: Որպես ուսումնասիրության ինքնուրույն միջոց՝ կիրառվում է հոգեբանության բոլոր բաժիններում, հատկապես սոցիալական, կրթության հոգեբանության մեջ և այլն; Դիտման այս տեսակի դեպքում ուրիշների հոգեկան երևույթների ուսումնասիրումը կապված է նրանց արտաքին դրսևորումների՝ շարժողական և վեգետատիվ ռեակցիաների, վարքի ընկալման հետ:

- Դաշտային (բնական)

Դաշտային դիտումը օբյեկտների, նրանց առօրյա կյանքի և գործունեության դիտումն է իրական պայմաններում:

- Անհատական-կոլեկտիվ դիտում

Անհատական դիտումն իրականացվում է մեկ դիտողի կողմից: Կոլեկտիվ կամ խմբային դիտումն իրականացվում է մի քանի դիտողների համատեղ աշխատանքի միջոցով: Ընդ որում, համատեղությունը որոշվում է, առաջին հերթին, ուսումնասիրության ընդհանրացվածությամբ (միասնական պլան, նպատակ, մեթոդիկա):

- Պատահական-մտադրված դիտում

Պատահական դիտումը նախօրոք չպլանավորված դիտումն է, որն իրականացվում է անսպասելիորեն ստեղծված պայմաններում: Դիտման այս տեսակը մեծ դեր ունի հատկապես հազվադեպ երևույթների ուսումնասիրման համար, որոնք կանխատեսել անհնարին է: :

- Համակարգված-չհամակարգված դիտում

Համակարգված դիտումը մտադրված դիտումն է, որն իրականացվում է նախօրոք մշակված պլանով, և, որպես կանոն, նախօրոք կազմված գրաֆիկի համաձայն: Այս մեթոդը կարելի է դիտարկել երկու տեսանկյունից՝ ընթացակարգային և ժամանակային:

Առաջինը պահանջում է դիտման նպատակի և խնդիրների հստակ պատկերացում, դիտողի գործողությունների որոշակիություն և

կանոնակարգվածություն, դիտվողների վարքային դրսևորումների գրանցման հստակ համակարգ։

Ժամանակային ասպեկտը բազմակի դիտումների պլանավորումն է և հաշվեկշռումը։ Այն շատ հաճախ օգտագործվում է լոնգիտյուդ (երկայնական) հետազոտություններում։

Չհամակարգված դիտումը ոչ խիստ դիտումն է՝ առանց որոշակի պլանի։

- Ամբողջական- ոչ ամբողջական դիտում

Ամբողջական դիտման ընթացքում դիտողի համար մատչելի առավելագույն ինֆորմացիան։ Նպատակն է օբյեկտի հստակ, մանրամասն ուսումնասիրումը։ Սակայն, «ամբողջականություն» հասկացությունը հարաբերական է, և նրա մակարդակը կախված է դիտողի օբյեկտիվ և սուբյեկտիվ հնարավորություններից։

- Համընդհանուր-ընտրողական դիտում

Համընդհանուր դիտումը օբյեկտի անընդհատ դիտումն է՝ առանց ընդմիջման։ Սովորաբար կիրառվում է կարճաժամկետ ուսումնասիրման դեպքում ավելի շատ ինֆորմացիա ստանալու համար։

Ընտրողական դիտումն իրականացվում է դիտողի կողմից ընտրված հատուկ ժամանակամիջոցներում։

- Հաստատուն-գնահատողական դիտում

Հաստատուն դիտման ընթացքում նկատված երևույթները և գործողությունները միայն գրանցվում են և քննարկման ենթակա չեն։ Այսինքն՝ դիտումն ուղեկցվում է դիտված երևույթների ամբողջական գրացմամբ, բայց առանց դիտողի վերաբերմունքի և գնահատականի արտահայտման։

- Ստանդարտ-ոչ ստանդարտ դիտում

Ստանդարտ դիտումն իրագործվում է նախօրոք մշակված սխեմայով, գրանցման ձևով։ Ընդ որում, այս դեպքում հաճախ օգտագործվում են բլանկներ։ Կիրառվում է, երբ ուսումնասիրվող գործընթացը հասկանալի է, և պահանջվում է միայն ճշգրտում և լրացուցիչ ինֆորմացիայի ստացում։

Ոչ ստանդարտ դիտումը չկարգավորված դիտումն է, որի ընթացքում կատարվածի նկարագրումը դիտողի կողմից արտահայտվում է ազատ ձևով։ Այս մեթոդը թույլ է

տալիս նոր ձևով դիտարկել օբյեկտը և տեսնել նախկինում չնկատած օրինաչափությունները։

- Բաց-փակ դիտում

Բաց դիտման ընթացքում դիտվողները գիտեն որպես ուսումնասիրման օբյեկտ իրենց դերի մասին։ Սովորաբար հայտնի է նաև դիտողը։

Փակ դիտման ժամանակ հետազոտվողին չեն հայտնում այդ մասին, իրականացվում է նրանից անկախ։ Սակայն այս մեթոդը ուղեկցվում է դժվարություններով, երբ դիտվողն արդյունքում պարզում է, որ ինքը եղել է դիտման օբյեկտ։ Այս մեթոդի առավելությունն այն է, որ բացառում է փորձարկվողի վրա դիտողի ազդեցությունը։

- Ներառված-չներառված դիտում

Ներառված դիտման ընթացքում դիտողը ներառվում է հետազոտվող խմբի մեջ և ուսումնասիրում այն, այսպես ասած, ներսից։ Առավելություններն են վառ տպավորությունները, հնարավորությունն ավելի խորը ներթափանցելու խմբի մթնոլորտի մեջ և հասկանալու մարդկանց ներաշխարհը։

- Ուղղակի-անուղղակի դիտում

Ուղղակի (անմիջական) դիտումն իրականացվում է հենց անմիջական դիտողի կողմից։

Անուղղակի դիտումն իրականացվում է միջնորդների միջոցով։ Միջնորավորում կարող է իրագործվել ոչ միայն մարդկանց կողմից, այլև տեխնիկական միջոցներով . օրինակ՝ դիտվողի բացակայության ժամանակ ձայնագրման սարքի օգտագործումը։

- Դիտավորյալ-ոչ դիտավորյալ դիտում

Դիտավորյալ դիտման ընթացքում դիտողը դիտվողին դրդում է որոշակի գործողության։ Դա կիրառվում է ուսումնասիրվող երևույթի ընդգծման համար։

Ոչ դիտավորյալ դիտման ընթացքում բացակայում է հետազոտողի հատուկ դրդողական ազդեցությունը դիտվողի վրա։

Գլուխ 2. Գնահատում

2.1 Գնահատումը, դրա հիմնական սկզբունքների եվ գործառույթների սահմանումը

Նախադպրոցական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունում կիրառվում են տարբեր անհատական մոտեցումներ /խրախուսում, ոգևորում/ երեխաների գիտելիքները, կարողությունները և հմտությունները այլ կերպ չեն գնահատվում:

Միջնակարգ հանրակրթական և հատուկ ուսումնական հաստատություններում կիրառվում է գնահատում, որը հանդիսանում է ուսումնական գործընթացի որակի և ուսուցման արդյունքների բացահայտման միջոց:

Գնահատմամբ պարզվում է սովորողների և դպրոցների կողմից առարկայական չափորոշիչների ու ծրագրերի պահանջների կատարումը:

Գնահատման հիմնական նպատակը սովորողի գիտելիքների, կարողությունների ու հմտությունների մակարդակի, անձնային որակների ստուգումը և դրա հիման վրա ուսումնական գործընթացի կատարելագործման, ուսման որակի վերահսկումն է:

Գնահատումը նպաստում է նաև սովորողի ինքնահաստատմանը և ինքնազարգացմանը:

Գնահատման գործող համակարգի վերափոխումը պայմանավորված է որոշակի հիմնախնդիրների առկայությամբ: Դրանք են՝

ա) գնահատումը հիմնականում բացահայտում է սովորողի ստացած տեղեկությունների ու փաստերի մտապահման աստիճանը և չի նպաստում նրա ճանաչողական-կիրառական կարողությունների ու հմտությունների զարգացմանը.

բ) գնահատման գործընթացը թափանցիկ չէ և ամբողջովին չի բացահայտում ուսուցման արդյունքները, չի արտացոլում յուրաքանչյուր սովորողի և դպրոցի առաջընթացի իրական պատկերը.

գ) դպրոցի ուսումնադաստիարակչական գործունեությունը գնահատելիս հաշվի չեն առնվում տվյալ դպրոցի առանձնահատկություններն ու հնարավորությունները, սահմանված չեն դպրոցների գնահատման միջինացված միասնական չափանիշներ.

դ) հինգմիավորանոց համակարգը չի ապահովում ճշգրիտ տարբերակված գնահատում և միավորային համարժեքության որոշման առումով բարդություններ է առաջացնում այլ երկրների գնահատման համակարգերին համադրելիս:

Սովորողների գնահատման նոր համակարգի մշակումը և կիրառությունը պետք է կատարվի առարկայական չափորոշիչների և ծրագրերի ներդրմանը զուգահեռ:

Գնահատման ներդրվող համակարգը պիտի հիմնվի արդարության, հուսալիության, անկողմնակալության, հավաստիության, հիմնավորվածության, մատչելիության, թափանցիկության սկզբունքների վրա և ապահովի համադրելիությունը միջազգայնորեն ընդունված գնահատման չափանիշներին:

Գնահատման հիմնական գործառույթներն են՝

1. սովորողի ուսումնական գործունեության և առաջադիմության գնահատումը, ինքնակրթության և ինքնագնահատման, կրթական մի աստիճանից մյուսին անցման հնարավորության ապահովումը, կրթության շարունակականության խրախուսումը.
2. սովորողին ներկայացվող պահանջների կատարման, ուսումնական նյութի յուրացման աստիճանի բացահայտումը.
3. դպրոցի գործունեության արդյունավետության բացահայտումը, ուսուցիչ-սովորող համագործակցային հարաբերությունների զարգացումը.
4. սովորողի հետ տարվող անհատական աշխատանքի բովանդակության և ծավալի ճշգրտումը.
5. սովորողի անձնային որակների ձևավորման և վարքագծի բացահայտմանը նպաստելը, ինքնաճանաչողության ապահովումը.
6. մանկավարժների վերապատրաստման և մասնագիտական աճի ապահովումը.
7. չափորոշիչների, առարկայական ծրագրերի, դասագրքերի և ուսումնական այլ նյութերի, ուսուցման մեթոդների կատարելագործման հիմքերի ապահովումը.
8. հանրակրթության բարեփոխման ուղղությունների հստակեցումը, բովանդակության արդիականացումն ու կրթական համակարգի համապատասխանեցումը միջազգայնորեն ընդունված չափանիշներին.
9. սովորողի ուսումնական գործունեության արդյունքների որակավորումը.

10. դպրոցի հանդեպ ծնողների, համայնքի, հանրության վստահության ձևավորումն ու ամրապնդումը:

Գնահատումը բացահայտում է նաև ուսումնական գործընթացի ամբողջական արդյունքները, որոշակի առարկայի յուրացման մակարդակի առանձին ուսումնական հաստատությունում, մարզում, ինչպես նաև՝ հանրապետության ողջ տարածքում:

2.2 ԿԱՊԿ ունեցող աշակերտների գնահատում

Միավորային գնահատումն իրականացվում է նաև ԿԱՊԿ ունեցող սովորողների համար: ԿԱՊԿ ունեցող երեխաների կրթության իրավունքի իրացման գործընթացը հիմնվում է կրթության մատչելիության, հավասար մասնակցության հնարավորության և որակի ապահովման սկզբունքների վրա:

Ներառական կրթությունը համարվում է յուրաքանչյուր սովորողի կարողությունների լիարժեք բացահայտման միջոցով որակյալ կրթական ծառայությունների մատուցման գործընթացների ամբողջություն: Ներառական կրթությունը ենթադրում է բոլոր՝ այդ թվում ԿԱՊԿ ունեցող սովորողների ներառումը տվյալ դասի ուսումնական նյութի յուրացման գործընթացում: Ներառական կրթությունը շարունակական գործընթաց է , որն ուսուցչից պահանջում է ճիշտ կազմակերպել ուսումնական գործընթացը ՝կարևորելով սովորողի գնահատումն ընդհանրապես և մասնավորապես ԿԱՊԿ ունեցող սովորողի գնահատումը: Քանի որ ԿԱՊԿ ունեցող սովորողները ներառվում են ուսումնական գործընթացում՝ նրանց գնահատումը ևս պետք է իրականացվի առանց խտրականության՝օգտագործելով միավորային գնահատման համապատասխան տեսակները և գնահատման 10 միավորային սանդղակը: Հաշվի առնելով ԿԱՊԿ ունեցող սովորողների առանձնահատկությունները, ուսումնական ձեռքբերումների ստուգման և գնահատման միջոցները հարմարեցվում են նրանց ընկալման և մտավոր գործունեության կարողություններին:

Առաջադրանքները կարելի է կազմել ԿԱՊԿ ունեցող յուրաքանչյուր սովորողի համար՝ չափորոշչի նվազագույն պահանջները՝ անհրաժեշտության դեպքում դրանք տրոհելով և հարմարեցնելով այդ սովորողների ընկալման հնարավորություններին : Ամփոփիչ աշխատանքները պետք է հարմարեցվեն ԿԱՊԿ ունեցող սովորողների կարիքներին՝ ըստ անհրաժեշտության ապահովելով լրացուցիչ ժամանկ :

Գնահատման գործընթացը պետք է պայմաններ ընձեռի սովորողներին իրենց գիտելիքների ներուժի արտահայտման համար: Այդ իսկ պատճառով կարևոր է, որ գնահատումն իրականացվի սովորողի համար անմիջական, հանգիստ և բնական պայմաններում : Այն պետք է հնարավորություն ընձեռի սովորողի նկատմամբ արդար

վերաբերմունքի դրսևորման համար, հիմնված պետք լինի հավասարության սկզբունքի և օբյեկտիվ գնահատման հիմքի վրա:

ԿԱՊԿ ունեցող սովորողի միավորային գնահատման կիրառման քանակը կախված է տվյալ սովորողի կարիքի առանձնահատկություններից, կարելի է հասցնել թույլատրելի նվազագույն քանակներին:

ԿԱՊԿ ունեցող սովորողի համար օգտակար և արդյունավետ է ուսուցանող գնահատման կիրառումը, որի դերը մեծ է թե հոգեբանորեն, թե ուսուցման առումով սովորողի գնահատման նպատակահարմար միջոց:

ՈՒսուցանող գնահատումը պիտի ճանաչվի որպես կենտրոնական՝ դասարանային պրակտիկայում՝ ինչպես ԿԱՊԿ ունեցող, այնպես էլ մյուս սովորողների համար, քանի որ դասարանում ուսուցչի և աշակերտի համար ,քանի որ դասարանում ուսուցչի և աշակերտի կատարած աշխատանքի մասը կարելի է որակավորել որպես գնահատում: Այն, ինչ ասում և անում են սովորողները, դիտարկվում են և մեկնաբանվում է, և ուսումնառության բարելավման վերաբերյալ եզրակացություններ են արվում:

ՈՒսոցանող գնահատումը պետք է իրականացվի նրբանկատորեն, լինի կառուցողական, քանի որ ցանկացած գնահատում ունի իր հուզակամային ազդեցությունը ՝ հատկապես ԿԱՊԿ ունեցող սովորողի վրա:

ՈՒսուցիչը պետք է տեղյակ լինի այն ազդեցությանը, որ կարող են ունենալ մեկնաբանությունը, գնահատականը կամ թվանշանը սովորողի ինքնքվստահության և խանդավառության վրա և պետք է հնարավորինս կառուցողական լինի իր տրամադրած հետադարձ կապի մեջ: Աշխատանքի և ոչ թե անձի վրա կենտրոնացած մեկնաբանություններն ավելի կառուցողական են և՛ սովորելու, և՛ մոտիվացիայի համար:

Գնահատումն իրականացվում է նաև հայտորոշիչ թեստի միջոցով: Նպատակն է պարզել դասավանդված ուսումնական նյութի կամ հմտության յուրացման մեջ աշակերտի կամ ուսուցչի ձեռքբերումները, թերացումները, թերություններն ու սխալները: Հայտորոշիչ թեստի նպատակն է՝ որոշել, թե արդյո՞ք սովորողը պատրաստ է շարունակելու հետագա ուսումնառությունը: Այս թեստի նպատակը ոչ թե ընդհանուր պատկերացումներ ունենալը, կամ աշակերտներին ըստ գիտելիքների

խմբերի բաժանելն է, այլ յուրաքանչյուր սովորողի ուժեղ և թույլ կողմերի պարզելը և թերացումները վերացնելու ուղիներ գտնելը:

Առաջին դասարանը չի գնահատվում, գնահատումն իրականացվում է բնութագրման միջոցով:

Տարեվերջյան ամփոփիչ գնահատման նպատակով լրացվում են հետևյալ բնութագրերը.

1. յուրաքանչյուր սովորողի աճի /առաջադիմության/ բնութագիր, որը ներառում է նրա ուսումնական գործունեության արդյունքները՝ առաջին դասարանի առարկայացանկում ընդգրկված ուսումնական բոլոր առարկաներից առանձին – առանձին,

2.սովորողի հոգեբանական զարգացման բնութագիր:

Այդ բնութագրերի ձևերը, լրացման և սովորողների ծնողներին տեղեկացման կարգը սահմանվում է ԿԳ նախարարության կողմից /Հաստատված է ՀՀ ԿԳ նախարարի 2007թ. Հոկտեմբերի 4-ի N 846 –Ն հրամանով:

2.3 Գնահատման ընդհանուր չափանիշները

Ավարտունակությունը: Սա այն աստիճանն է, որով ուսումնական խոշոր նպատակակետերը կարող են օգտագործվել որպես հիմք՝ ուրիշներին բացատրելու դասավանդման մեթոդները կամ ուսումնական ծրագրի բնութագրիչ գծերը:

Բարեփոխում: Սա այն չափն է, որով դասակարգումն օգնում է արժևորել ուսումնական ծրագրիրը կամ ուսումնական նպատակակետերը և հանգեցնում վերջիններիս վերափոխման:

Պարզություն: Սա դասակարգման վերջնական օգտագործողների /ուսուցիչների, պաշտոնատար անձանց/ կողմից դասակարգման ըմբռնման դյուրինությունն է:

Հաղորդում: Սա դասակարգման օգտակարությունն է՝ որպես առանձին սովորողներին, կրթության բնագավառի պաշտոնատար անձանց, պետական պաշտոնյաներին կամ հանրությանը գնահատման արդյունքների տեղեկացումը կազմակերպելու միջոց:

Եզրակացություն

Հոգեբանական դիտման համար մեծ նշանակություն ունի ադեկվատությունը։ Ընդհանուր առմամբ, ուշադրություն է դարձրվում ստացված արդյունքների և ուսումնասիրման առարկայի միջև համապատասխանությանը։ Ինչպես ցանկացած հոգեբանական մեթոդի, այնպես էլ դիտման գործընթացում օբյեկտի դերում հանդես են գալիս հոգեկանի կրողները՝ առանձին մարդիկ, կենդանիներ և դրան խմբերը, իսկ դիտման առարկայի դերում՝ այդ օբյեկտների հոգեկանի գործունեությունը։

ՈՒսոցանող գնահատումը պետք է հաշվի առնի սովորողի մոտիվացիայի կարևորությունը։ Խրախուսող գնահատումը խթանում է մոտիվացիան՝ ավելի շատ շեշտելով առաջընթացն ու հաջողությունները քան ձախողումները։ ՈՒսուցանող գնահատումը առանձնահատկությունը, որ դրա միջոցով սովորողն ուրիշների հետ չի համեմատվում հատկապես կարևոր է դառնում ԿԱՊԿ ունեցող սովորողի պարագայում։

ՈՒսուցողական գնահատումը պետք է նպաստի յուրաքանչյուր սովորողի հնարավորությունների լիարժեք բացահայտմանը և իրենց նվաճումները գնահատելու կարողությունների ձևավորմանը։

Օգտագործված գրականություն

- Ավանեսյան Հ. Մ՝. Փորձարարական հոգեբանություն։ Ուսումնական ձեռնարկ.-Եր.։ Էդիթ Պրինտ, 2010։
- 1.Հանրակրթության պետական կրթակարգ. Միջնակարգ կրթության պետական չափորոշիչ, Երևան, «Անտարես», 2004

  2.Սովորողների գնահատման հայեցակարգ, ՀՀ ԿԳՆ, Կրթական ծրագրերի կենտրոն, Երևան, 2005։

  3.Հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների ընթացիկ գնահատման մեթոդաբանություն.Ընդհանուր դրույթներ, հիմնական մոտեցումներ, Կրթական ծրագրերի կենտրոն, Երևան, 2005։
- Ստեփանյան Ռ. Գալստյան Ա. Հոգեդիագնոստիկա։ Ուսումնական ձեռնարկ/ ԵՊՀ հրատ.,2012. 210 էջ։
- Ананьев Б.Г. О проблемах современного человекознания: 2-е издание-СПб.: Питер,2001, с 206-214.